

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2023-2028 թ.թ.



2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ _____	3
1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ _____	3
2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՅԼ և ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ _____	4
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ _____	8
4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ _____	10
5. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ _____	15
6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ _____	16
7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՍՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ _____	17
8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ _____	18
9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ _____	19
10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ _____	22

ՆԱԽԱԲԱՆ

Վերին Խոտանան գյուղը գտնվում է Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից 25 կմ հեռավորության վրա: Ըստ մեզ հասած տեղեկությունների գյուղում առաջին դպրոցը բացվել է 1913 թվականի աշնանը մասնավոր տներից մեկում՝ Հմայակ Տեր-Դավթյանի ջանքերով: 1917թ. դպրոցում սովորել են 17 աշակերտներ: Հմայակ Տեր-Դավթյանը ցարական կառավարության կողմից Գորիս քաղաքից արքայազնի հայրենի Վերին Խոտանան գյուղ: Գյուղում անգրագիտությունը վերացնելու նպատակով բացում է առաջին դպրոցը և ընկերոջ՝ հայտնի հեղափոխական Բագրատ Հարությունյանի հետ նվիրվում լուսարարական աշխատանքին: Հետագայում արդեն բրիգադային կոմիսարի բարձր կոչում ստացած ուսուցիչ-գինվորականը դառնում է 1937-ի զոհը: 1931 թ. ինժեներ Միքայել Պետրոսյանի նախաձեռնությամբ և կոլվարչության նախագահ Արտաշես Բալասանյանի հովանավորությամբ կառուցվեց դպրոցական շենքը: Մինչև 1962թ. դպրոցը եղել է յոթնամյա, իսկ հետո՝ ութնամյա: 1983թ. հին դպրոցի կողքին կառուցվեց դպրոցական նոր տիպային շենքը: 1993թվականից դպրոցը միջնակարգ է, իսկ 2015թ.-ից կրում է Չանգեզուրի գոյամարտի հերոս Պողոս Տեր-Դավթյանի անունը:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց, հասցե՝ 3319, ՀՀ Սյունիքի մարզ, գ. Վերին Խոտանան, 5-րդ փողոց, շենք 25) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և Դպրոցի կանոնադրությամբ:

2002 թվականի դեկտեմբերի 13-ին Դպրոցը գրանցվել է իրավաբանական անձանց պետոբեզիստրի Կապանի տարածքային բաժնում, գրանցման համարը՝ 72.210.01075, ՀՎՀՀ՝ 09407825: Դպրոցի գործող կանոնադրությունը հաստատվել է 17.10.2017թ.-ին՝ Սյունիքի մարզպետի 30.08.2017թ. թիվ 84-Ա որոշմամբ, փոփոխություններ կրել 26.08.2020թ.-ին՝ Սյունիքի մարզպետի 19.12.2019թ. թիվ 127-Ա որոշմամբ, 29.12.2020թ.-ին՝ Սյունիքի մարզպետի 01.10.2020թ. թիվ 230-Ա որոշմամբ, 29.12.2021թ.-ին՝ Սյունիքի մարզպետի 11.11.2021թ. թիվ 469-Ա որոշմամբ: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ-ի մարտի 3-ի N156-Ա/Ք

հրամաններով տրված N0702, N0691, N0574 լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- տարրական հանրակրթական՝ 36 տեղ,
- հիմնական հանրակրթական՝ 90 տեղ,
- միջնակարգ հանրակրթական՝ 54 տեղ:

Դպրոցի շենքը տիպային է, բաղկացած 1 մասնաշենքից, նախատեսված է թվով 180 սովորողների մեկ հերթափոխով ուսումնառությունը կազմակերպելու համար:

Դպրոցում կա 12 դասասենյակ, 1 կահավորված համակարգչային դասարան, կահավորված գրադարան, մարզադահլիճ, մարզահրապարակ, հանդիսությունների դահլիճ:

Դպրոցում աշխատողների թիվը 15 է: Դպրոցում աշխատում են 6 մանկավարժներ, որոնցից.

բարձրագույն կրթությամբ՝ 4, որոնցից մանկավարժական՝ 2,

միջին մասնագիտական կրթությամբ՝ 2, որոնցից մանկավարժական՝ 1:

Աշակերտների ընդհանուր թիվը 16 է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ, պաշտոնական կայք (verinkhotanan.schoolsite.am), որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական հաշվետվությունները, հաստիքացուցակը, հայտարարությունները, թափուր աշխատատեղերը և այլն: Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՅԼ և ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Դպրոցն ունի ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր գործածության ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան:

«Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների նիստերի արդյունքում ստացված առաջարկներն ու վերջին 5 տարվա ընթացքում իրականացված ներքին գնահատման արդյունքները: Նախքան Դպրոցի զարգացման ծրագրի կազմումը բացահայտվել են Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու խոչնդոտները, ըստ այդմ էլ վեր են հանվել Դպրոցի հիմնախնդիրները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
ա) ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	
1.Դպրոցի շենքը տիպային է:	1.Դպրոցի շենքը հիմնադրման օրվանից չի հիմնանորոգվել:
2.Տանիքը վերանորոգված է:	2.Պատուհաններն ու դասասենյակների դռները անհրաժեշտ է փոխել:
3.Սանհանգույցները վերանորոգված են:	3.Զրամատակարարման և կոյուղու խողովակներն անհրաժեշտ է փոխել:
4.Դպրոցն ունի նորոգված նիստերի դահլիճ:	4.Դպրոցամերձ ասֆալտապատ տարածքը կարիք ունի նոր ասֆալտապատման:
5.Գրադարանն ու համակարգչային սենյակը գտնվում են բարվոք վիճակում:	5.Մարզադահլիճն ու արհեստանոցը վերանորոգման կարիք ունեն:
բ) ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ	
1.Դպրոցն ունի պրոյեկտոր:	1.Դպրոցը չունի ինտերակտիվ գրատախտակ:
2.Դպրոցն ունի բավարար քանակությամբ համակարգչային տեխնիկա՝ հաշվապահի, օպերատորի և ուսուցիչների աշխատանքի կազմակերպման համար:	2.Համակարգիչների զգալի մասը հնացած է և շահագործման ենթակա չէ, համացանցին միացած է 1 համակարգիչ:
3.Մարզահրապարակը կահավորված է:	3.Մարզահրապարակը տարվա ընթացքում լիարժեք գործում է 4-5 ամիս:
4.Դպրոցում կա ՏՈԶ-8 օդամղիչ հրացան:	4.Դպրոցը չունի հրաձգարան:
5.Շախմատի դասասենյակն ունի անհրաժեշտ գույք և պարագաներ:	5.Դպրոցը չունի լաբորատոր սարքավորումներ:
6.Դասասենյակներն ունեն անհրաժեշտ գույք (սեղան, աթոռ, գրատախտակ):	6.Գույքի մեծ մասը հնացած է:
7.Դպրոցն ունի կրակմարիչներ:	7.Դպրոցը չունի հակահրդեհային վահանակ:
8.Դպրոցն ունի արհեստանոց:	8.Արհեստանոցը վերանորոգված չէ, չկան նոր հաստոցներ և սարքավորումներ:
գ) ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ « ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ	

1. Պետական ֆինանսական մուտքեր:	բյուջեից ստացվող միջոցների կայուն	1. Նվիրատվությունների, բարեգործությունների արդյունքում ստացվող լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայություն:
2. Դպրոցում գործածության փաստաթղթերը:	առկա պարտադիր երաշխավորված	2. Համակարգային խնդիրների պատճառով փաստաթղթերի թղթային ձևաչափից անցումը էլեկտրոնային իրականացվում է դանդաղ:
3. Աշխատավարձերի, ժամանակին վճարումներ:	և հարկերի կանոնավոր	3. Դպրոցում չեն իրականացվում օրենքով չարգելված վճարովի լրացուցիչ կրթական ծառայություններ:
դ) ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ		
1. Դպրոցում գործում է համաձայն համաձայն ձևավորված կողմից կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, մեթոդական միավորումներ:		1. Մեթոդմիավորումները կազմված են կից առարկաների մասնագետներից: Գործում են միայն տարրական դասարանների, բնագիտական և հումանիտար խմբերը:
ե) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ		
1. Ուսուցիչ - աշակերտ ակտիվ համագործակցություն:		1. Այլ դպրոցների հետ համագործակցության պակաս:
2. Դպրոց-ընտանիք համագործակցություն:		2. Դպրոցի նախկին տարիների շրջանավարտների հետ համագործակցության պակաս:
3. Համագործակցություն «Թումո» և «Վորլդ Վիժն Արմենիա» կազմակերպությունների հետ:		3. «Թումո» և «Վորլդ Վիժն Արմենիա» կազմակերպությունները գտնվում են մարզկենտրոնում՝ գյուղից 25 կմ հեռու:
զ) ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ		
1. Դպրոցի նիստերի դահլիճը գտնվում է բարեկարգ վիճակում:		1. Նիստերի դահլիճը նոր գույքով համալրման կարիք ունի:
2. Դպրոցը ունի կահավորված գրադարան և համակարգչային		2. Առարկայական կաբինետները որպես այդպիսին չեն գործում

դասարան:	անհրաժեշտ կահավորում չունենալու պատճառով:
3. Մինչև 6 տարեկան գյուղաբնակ մանկահասակ երեխաների թիվը 6 է:	3. Նախակրթարանի բացակայություն:
4. Դպրոցն ունի կահավորված մարզահրապարակ:	4. Խմբակների բացակայություն՝ դասարանների քիչ լինելու պատճառով:
է) ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
1. Ուսուցիչների մի մասը դասապրոցեսին կիրառում է նոր տեխնոլոգիաներ:	1. ՏՀՏ – ի կիրառման քիչ հնարավորություններ:
2. Բազմալսաստակ ուսուցիչների բարեխիղճ աշխատանքի պատրաստակամություն:	2. Ուսուցիչների խրախուսման քիչ հնարավորություններ:
3. Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայություն:	3. Կահավորված առարկայական դասասենյակների, լաբորատորիաների բացակայություն:
4. Ուսուցիչների փոխհամագործակցություն:	4. Որոշ առարկաների մասնագետ ուսուցիչների բացակայություն:
5. Ուսուցչական կադրերի հոսքի բացակայություն:	5. Երիտասարդ ուսուցիչների պակաս:
ը) ԴՊՐՈՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ	
1. Դպրոցի սաների կրթության կայուն որակ:	1. Ոչ բոլոր աշակերտների կողմից ցուցաբերվող բավարար մոտիվացիա:
2. Առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին կայուն մասնակցություն	2. Լաբորատորիաների և SMART գրատախտակի բացակայություն
3. Դպրոցի շրջանավարտների ամենամյա ընդունելություն ԲՈՒՀ-եր:	3. Որոշ շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման բացակայություն:
4. Դպրոցի սաները պարբերական պարզևատրվում են դիպլոմներով առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերում:	4. Տարակարգ ունեցող կամ կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն:
թ) ԴՊՐՈՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
1. ՏՀՏ-ի որոշակի հագեցվածություն :	1. Դյուրակիր համակարգիչների պակաս:
2. Ինտերնետ կապի առկայություն:	2. Ինտերնետ կապին միացված է 1 համակարգիչ

3. Դասապրոցեսը վարվում է անհատական մոտեցմամբ (աշակերտները քիչ են):	3. Երիտասարդ մասնագետ ուսուցիչների ներգրավման պակաս հնարավորություններ:
4. Փորձեր են արվում նախագծային աշխատանքներ կատարելու ուղղությամբ:	4. Թերկումպլեկտավորված դասարանների դեպքում վարձատրությունն ամբողջական չէ:
Ժ) ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	
1. Մասնագետ ուսուցիչների պակաս:	
2. Ուսուցչի ցածր աշխատավարձ:	
3. Դպրոցի շենքի և դպրոցամերձ տարածքի հիմնանորոգում:	
4. Նյութատեխնիկական բազայի բարելավում (լաբորատոր սարքավորումներ, մարզագույք, առարկայական կաբինետներ, հրաձգարան և զենքի պահեստ, արհեստանոցի գույք, հակահրդեհային վահանակ):	
5. Նախակրթարանի բացակայություն	

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Նպատակը որոշակի ժամանակահատվածում ակնկալվող արդյունք է, խնդիրը՝ նպատակին հասնելու միջոց: Դպրոցի հաջողության գրավականը՝ նպատակի ճիշտ ուղղություն ընտրելն է:

N	ՆԱՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ
1	Ուսումնական միջավայրի բարելավում	Դպրոցի շենքի լրիվ կամ մասնակի վերանորոգում
2	Դպրոցի մանկավարժական համակազմի համալրում և որակավորման բարձրացում	Մասնակցել առցանց վերապատրաստումներին: Մշտական համագործակցություն ապահովել կրթություն կազմակերպող և իրականացնող բոլոր կառույցների հետ: Կրթության կառավարման լիազոր մարմնի առջև հետևողականորեն բարձրացնել

		ուսուցչի վարձատրման բազային դրույքաչափի բարձրացման հարցը:
3	Ուսման արդյունավետության բարձրացում	Լաբորատոր և համակարգչային անհրաժեշտ միջոցների ձեռքբերում
4	Դաստիարակությունը՝ ուսումնառության անբաժանելի մաս	Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում
5	Դպրոցը՝ համագործակցային կրթության միջավայր	Խորհրդակցական մարմինների ակտիվացում, Դպրոց – ընտանիք – համայնք համագործակցության ապահովում
6	Ունենալ մրցունակ աշակերտ	Բոլոր օլիմպիադաներին, մրցույթներին, կազմակերպվող սպորտային առաջնություններին ունենալ առնվազն մասնակցություն
7	Դառնալ առաջադեմ և մասնակցային դպրոց	Բոլորի ասելիքը լսելի դարձնել և կայացնել թիմային որոշումներ: Ապահովել կապը կրթական կազմակերպությունների հետ
8	Դասապրոցեսում SՀS – ի կիրառումը՝ որպես աշակերտի մոտիվացիայի և ուսման որակի բարձրացման միջոց:	Զարգացնել ուսուցչի համակարգչային գրագիտությունը: SՀS – ի կիրառման կարողությունների ամրապնդում
9	Սովորողների առողջության պահպանում, անվտանգ կենսագործունեության ապահովում	Սպորտդահլիճի և մարզահրապարակի վերանորոգում, մարզագույքի համալրում
10	Դպրոցը որպես հաշվետու և բարենպաստ միջավայր ապահովող կրթօջախ	Կառավարման մարմինների հետ սերտ աշխատանք և կարգապահության ամրապնդում

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	Գործողություն	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Արդյունք	Նշումներ
1	Քայլ 1. Հետամուտ լինել Դպրոցի շենքի լրիվ կամ մասնակի վերանորոգման իրականացմանը	2023-2028	Լիազոր մարմին, բարերարներ, տնօրեն	Կրթական միջավայրի բարելավում	
2	Քայլ 1. Դիմել «Դասավանդիր Հայաստանում» և համապատասխան մարմիններ մասնագետներ ներգրավվելու համար: Քայլ 2. Լիազոր մարմնի միջնորդությամբ համապատասխան մասնագետ կադրերի ներգրավում (անվճար տեղերի պահանջագրով և կամ գործուղումով): Քայլ3. Շարունակելով հերթական ատեստավորման գործելառճը՝ հորդորել ուսուցիչներին կամավոր ատեստավորում անցնելու համար: Քայլ 4. Հետամուտ	2023-2028	Լիազոր մարմին Տնօրեն Ուսուցիչներ	Մանկավարժական համակազմի համալրումը որակավորված մասնագետներով	

	լինել ուսուցչի բազային դրույթաչափի բարձրացմանը				
3	Քայլ 1. Դիմել համապատասխան մարմիններին քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության առարկաների պատշաճ դասավանդման համար նյութեր և պարագաներ հայթհայթելու նպատակով: Քայլ 2. Արհեստանոցի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում: Քայլ 3. Մարզադահլիճի Կահավորում: Քայլ 4. Մարզագույքի Ձեռքբերում:	2023-2028	Լիազոր մարմին, Տնօրեն, բարերարներ	Ուսումնառության համար արդյունավետ միջավայրի ստեղծում	
4	Քայլ 1. Համագործակցություն ՀԱԵ Սյունյաց թեմի հետ Քայլ 2. Նշել պետական նշանակության (տոնական և	2023-2028	Լիազոր մարմին, ՀԱԵ Սյունյաց թեմ Տնօրեն, դասղեկներ	Կրթադաստիարակչական աշխատանքների բարելավում	

	<p>հիշատակի) օրերը Քայլ 3. Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում Քայլ 4. Ջրույց՝ հուզող թեմաների շուրջ (թմրամիջոցներ, ծխախոտ) և պլակատի լույս ընծայում</p>				
5	<p>Քայլ 1. Առնվազն կիսամյակը երկու անգամ հրավիրել համադպրոցական ծնողական ժողովներ՝ իրազեկելով առկա վիճակը, վերհանելով խնդիրները: Քայլ 2. Գյուղի բուժքրոջը պարբերաբար հրավիրել դպրոց (անհրաժեշտության դեպքում, ոչ պակաս ամիսը մեկ անգամ) սանիտարահիգիենիկ իրավիճակային և ընդհանուր բուժզննման նպատակով: Քայլ 3. Գյուղի վարչական ղեկավարի հետ համագործակցելով՝</p>	2023- 2028	Տնօրեն, վարչական ղեկավար, բուժքույր, դասղեկներ, ԾԽ նահագահ	Համագործակ ցային կրթական միջավայրի ամրապնդում	

	անցկացնել շաբաթօրյակ, ծառատունկ, կանաչապատում				
6	Քայլ 1. Շարունակել համագործակցել «Թումո» և «Վորլդ Վիժն Արմենիա» կազմակերպությունների հետ: Քայլ 2. Շարունակել մասնակցել ամենամյա շախմատի և առարկայական օլիմպիադաների ներդրոցական, տարածքային, մարզային և հանրապետական փուլերին: Քայլ 3. Աշակերտների ակտիվ մասնակցություն համադպրոցական մրցույթներին: Քայլ 4. Դիմել մոտակա դպրոցի տնօրինությանը՝ միջդպրոցական մրցույթներ կազմակերպելու համար:	2023-2028	Տնօրեն Մ/մ Նախագահ Ներ, Ուսուցիչներ,	Աշակերտների ուսման առաջադիմության բարձրացում, ուսման որակի բարելավում	
7	Քայլ 1. Հորդորել ուսուցիչներին ընտրել	2023-2028	Տնօրեն Մ/մ	Ուսուցման նոր	

	<p>դասավանդման նոր մեթոդներ՝ ՏՀՏ –ի կիրառումով: Մոտիվացնել աշակերտներին՝ պասիվ լսողից դառնալ ակտիվ կատարող: Քայլ 2. Համագործակցություն մենթոր դպրոցի հետ: Քայլ 3. Այցելություն կից գործնական:</p>		<p>նախագահներ Ուսուցիչներ Զինղեկ</p>	<p>մեթոդների կիրառումով՝ կրթության որակի բարելավում</p>	
8	<p>Քայլ 1. Համակարգչային տեխնիկայի և սարքավորումների համալրում: Քայլ 2. Ուսուցիչների մասնակցությունը մեդիագրագիտությանը ուղղված դասընթացներին: Քայլ 3. Համակարգչով կամ պրոյեկտորով դասապրոցեսը դարձնել գործելաոճ:</p>	2023-2028	<p>Տնօրեն Օպերատոր Ուսուցիչներ</p>	<p>ՏՀՏ-ի կիրառումը՝ որպես ժամանակակից ուսումնառության միջոց</p>	
9	<p>Քայլ 1. Մպորտդահլիճի վերանորոգում և մարզագույքի ձեռքբերում: Քայլ 2. Ֆիզկուլտուրայի</p>	2023-2028	<p>Տնօրեն, Ֆիզկուլտուրայի ուսուցիչ</p>	<p>Առողջ և անվտանգ կենսակերպի ապահովում</p>	

	մասնագետի ներգրավում (հնարավորության դեպքում): Քայլ3. Մարզահրապարակի վերանորոգում				
10	Քայլ 1. Բարելավել կառավարման Խորհրդի հետ համագործակցությունը: Քայլ 2. Խորհրդի կողմից սահմանած ներքին կարգապահական կանոնների պահպանումը դարձնել անխախտ գործելաոճ	2023-2028	Խորհուրդ, տնօրեն	Թափանցիկ գործելաոճով կարգապահ դպրոց	

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար այն պետք է պարունակի տեղեկատվություն ծրագրի կատարման պատասխանատուների վերաբերյալ: Ընդ որում, Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է պարբերաբար վերանայել այդ տեսանկյունից՝ հաշվի առնելով հաստատության գործունեության մեջ կատարվող ընթացիկ փոփոխությունները, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները. դրանց հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները:

Յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար ԴԶԾ-ում դպրոցի տնօրենության կողմից առանձնացվում են պատասխանատուներ (կատարողներ): Պետք է հաշվի առնել, որ գործողությունն իրականացնող պատասխանատուն և կատարողներն ունենան թիմային աշխատանք կատարելու փորձ և հմտություններ, հակառակ դեպքում կմեծանա տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքների

ռիսկայնությունը: Անհրաժեշտ է նաև պլանավորել պարբերական հաշվետվությունների ձևաչափ (մեխանիզմ):

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր պատասխանատուների փոխհամագործակցված և փոխներգործուն աշխատանքը: Դրա պլանավորման և իրականացման պատասխանատուն առաջին հերթին հաստատության տնօրենն է: Կարևոր է ընդգծել, որ կառավարման ժողովրդավար և արդյունավետ մեխանիզմների ապահովման հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ իրականացնել գործողությունների պատասխանատուների նշանակում: Ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական և դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համադրման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ ծառայում են յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականությունները:

Կրթական ցուցանիշները վիճակագրական այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս ինչպես տեղեկություն ստանալ կրթության ընթացիկ վիճակի մասին, այնպես էլ գնահատել դպրոցի արտաքին և ներքին արդյունավետությունը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է, որի մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների բարձրացմանը:

Ծրագրի արդյունքների գնահատումը՝ դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը նախատեսված է և կարգավորում է «Հանրակրթության մասին» օրենքով:

Յուրաքանչյուր իրականացված գործողություն չափելի է դարձնում ակնկալվող արդյունքը:

**7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ծրագրի իրականացման ռիսկերը հիմնականում ունեն օբյեկտիվ բնույթ և անկախ մեր կամքից կարող են խոչընդոտել ինչպես խնդիրների վերհանման և նպատակադրման, այլև գործողությունների իրագործման փուլում:

ՌԻՍԿԵՐԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Պետբյուջեյի միջոցների սղության պատճառով դպրոցի շենքի լրիվ կամ մասնակի վերանորոգման անհնարինություն:	Փնտրել բարերարների կամ այլ ներդրողների:
2. Համապատասխան կազմակերպությունների կողմից դպրոցին մասնագետ կադրերով չաջակցելը:	Շեշտը դնել տեղական կադրերի վրա, մասնագիտական կողմնորոշման դասընթացների ժամանակ դպրոցի աշակերտներին ներկայացնել ուսուցչի մասնագիտության կարևորությունն ու անփոխարինելիությունը:
3. Դպրոցն իր միջոցներով չի կարող ձեռք բերել նոր համակարգչային, լաբորատոր և արհեստագործական սարքավորումներ, մարզագույք:	Իրականացնել լրացուցիչ վճարովի կրթական ծառայություններ կամ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեություն:
4. Նորամուծությունների ներդրման, նորարարությունների և բարեփոխումների համաչափ ինտերգրման խնդիրներ:	Հանրակրթական սպասվելիք բարեփոխումների օրենքի ուժով կատարումն ապահովելը:
5. Ֆորս մաժորային իրավիճակներում (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ, պատերազմներ և այլն) անհրաժեշտ գործունեության ապահովման խնդիրներ:	Մշտապես ունենալ և թարմացնել արտակարգ իրավիճակներում գործողությունների հաստատված պլան:
6. Ներդպրոցական կյանքում ծնողների պասիվություն:	Դասղեկների և ուսուցիչների պարբերական այցելություններ տներ և ընթացիկ հարցերի քննարկումներ ծնողների հետ:

7.Քաղաքական անկայուն իրավիճակով կամ ֆինանսական դրդապատճառով էքսկուրսիաների սահմանափակում:	Այցելություններ տեղական պատմամշակութային հուշարձաններ, էքսկուրսիաների կազմակերպում շրջակա բնության գրկում:
---	--

**8. ԳՈՐԾՆՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ և
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ**

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են որոշակի միջոցներ: Ընդ որում, յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պետք է հստակ նշել պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնական միջավայրով: Հաստատությունը համալրված է նպատակային ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բավարար միջոցներով: Դպրոցի շենքը շահագործելի վիճակում է, հիմնականում ապահովված է աշակերտական գույքով: Դպրոցն ունի մասնակի կահավորված մարզադահլիճ, գրադարան, համակարգչային և ՆԶՊ դասասենյակներ: Դպրոցի սովորողների համար առկա են հնարավորություններ ՏՀՏ միջոցների ներգրավմամբ արդի պահանջներին համահունչ ժամանակակից կրթություն ստանալու համար: Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով և համակարգչային սարքավորումներով: Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների ռազմամարզական դաստիարակությանը: Դպրոցն ունի ՆԶՊ կաբինետ՝ ուսումնական զենքով: Դպրոցի բակային տարածքում կառուցվել է համալիր մարզադաշտ:

Կարևոր է նշել, որ չնայած առկա ձեռքբերումներին, հաստատությունում առկա է միջոցների և նյութատեխնիկական պարագաների համալրման անհրաժեշտություն՝ ինչը կապահովի դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատության համակարգողի հետ համագործակցային աշխատանքի ձևավորում: Դրա շրջանակներում

նախատեսված կարիքները պետք է նախապես մշակվեն և պլանավորված կերպով տրամադրվեն համակարգողին՝ ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

Ուսումնական հաստատությունը պետք է ապահովվի ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններով: Պետք է անհրաժեշտ պայմաններ ապահովել նաև՝ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի ամբողջական կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ, դպրոցի զարգացումն ապահովելու, սահմանված նպատակներին հասնելու և ընդհանուր ուսումնական բարենպաստ միջավայր ձևավորելու համար առկա են հետևյալ խնդիրները.

- Ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականության պաշարի համալրում,
- S2S բազայի նորացում, նոր համակարգչային սարքավորումների ձեռքբերում,
- Առարկայական կաբինետների ձևավորում,
- Բնագիտական լաբորատորիայի ստեղծում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար միջավայրի ձևավորում և անհատական հարմարեցումների ապահովում,
- Անհրաժեշտ գույքով դասասենյակների կահավորում,
- Ռազմամարզական վարժական հրապարակների ստեղծում,
- Մարզագույքով պորտոֆոլիո համալրում,
- Դպրոցական մարզադաշտի վերանորոգում:

9. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ԴԶԾ-ի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ, յուրաքանչյուր կիսամյակի վերջում: Զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ է մշակել վերահսկողության մեխանիզմներ, սահմանել հաշվետվության ձևեր, ժամանակացույց և ներկայացնել դրանք խորհրդի հաստատմանը: Ընդ որում, յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է Խորհրդին ներկայացնել Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, որը պետք է ներառի ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն:

Խորհրդին ներկայացվում է նաև տարեկան աշխատանքային պլանի ընտրված ժամանակահատվածի համար հաշվետվություն, որը ներառում է.

- ✓ նախատեսված խնդիրների կատարմանն ուղղված առանձին գործողությունների կատարման արդյունքները և դրանց հիմնավորումները,
- ✓ գործողությունների չկատարված կամ թերի կատարված լինելու պատճառները(առկայության դեպքում),
- ✓ սահմանված նպատակների և խնդիրների կատարման գնահատումը,
- ✓ զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները:

Հաստատության զարգացման ծրագրի կատարողական ցուցանիշները կարող են ներառել հետևյալ հիմնական ցուցանիշները.

- Ակադեմիական առաջնորդություն. զարգացման ծրագրի իրականացումը հաստատության տնօրենի առաջնորդությամբ խթանում է սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը՝ ուսուցման և ուսումնառության ընդհանուր պատկերացումների, դրանց զարգացման, քննարկման, իրականացման և գնահատման արդյունքում:
- Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշիչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա:
- Ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացվում է սովորողների առաջադիմության տվյալների, անցկացվող ընթացիկ, ամփոփիչ և արտաքին գնահատումների, կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները: Ամեն տարի իրականացվում է ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցառումներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերանայվում են մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները,

- Ապահովվում է ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին (մարդկային, ժամանակային, նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար,
- Գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնատության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար:

Դպրոցի զարգացման ծրագրի մշտական վերահսկողությունն իրականացնում է այն հավանության արժանացրած դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Դպրոցի խորհրդի կողմից ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի իրացնելու դպրոցի կառավարման այդ մարմնի ֆորմալ իրավունքը, այլ իրականում դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ, առկա ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով պետք է աջակցի տնօրենին ԴԶԾ-ի իրականացման բոլոր փուլերում:

ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

N	Միջոցառում/գործողություն	Ակնկալվող արդյունք		Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/գործողության չկատարման կամ մասնակի կատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
Խնդիր 1	Քայլ 1. Հետամուտ լինել Դպրոցի շենքի լրիվ կամ մասնակի վերանորոգման իրականացմանը:	Կրթական միջավայրի բարելավում						

Խնդիր 2	<p>Քայլ 1. Դիմել «Դասավանդիր Հայաստանում» և համապատասխան մարմիններ՝ մասնագետներ ներգրավվելու համար:</p> <p>Քայլ 2. Լիազոր մարմնի միջնորդությամբ համապատասխան մասնագետ կադրերի ներգրավում (անվճար տեղերի պահանջագրով և կամ գործուղումով):</p> <p>Քայլ 3. Շարունակելով հերթական ատեստավորման գործելառճը հորդորել ուսուցիչներին՝ կամավոր ատեստավորում անցնելու համար:</p> <p>Քայլ 4. Հետամուտ լինել ուսուցչի բազային դրույքաչափի բարձրացմանը</p>	<p>Մանկավարժական համակազմի համալրումը որակավորված մասնագետներով</p>				
---------	---	---	--	--	--	--

Խնդիր 3	<p>Քայլ 1. Դիմել համապատասխան մարմիններին քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության առարկաների պատշաճ դասավանդման համար նյութեր և պարագաներ հայթհայթել:</p> <p>Քայլ 2. Արհեստանոցի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում</p> <p>Քայլ 3. Մարզադահլիճի կահավորում</p> <p>Քայլ 4. Մարզագույքի ձեռքբերում</p>	Ուսումնառության համար արդյունավետ միջավայրի ստեղծում				
Խնդիր 4	<p>Քայլ 1. Համագործակցություն ՀԱԵ Սյունյաց թեմի հետ</p> <p>Քայլ 2. Նշել պետական նշանակության (տոնական և հիշատակի) օրերը</p> <p>Քայլ 3. Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում</p> <p>Քայլ 4. Զրույց՝ հուզող թեմաների շուրջ (թմրամիջոցներ, ծխախոտ) և պլակատի լույս ընծայում</p>	Կրթադաստի արակչական աշխատանքների բարելավում				

<p>Խնդիր 5</p>	<p>Քայլ 1. Առնվազն կիսամյակը երկու անգամ հրավիրել համադպրոցական ծնողական ժողովներ՝ իրազեկելով առկա վիճակը, վերհանելով խնդիրները:</p> <p>Քայլ 2. Գյուղի բուժքրոջը պարբերաբար հրավիրել դպրոց (անհրաժեշտության դեպքում, ոչ պակաս ամիսը մեկ անգամ) սանիտարահիգիենիկ իրավիճակային և ընդհանուր բուժզննման նպատակով:</p> <p>Քայլ 3. Գյուղի վարչական ղեկավարի հետ համագործակցելով՝ անցկացնել շաբաթօրյակ, ծառատունկ, կանաչապատում</p>	<p>Համագործակցային կրթական միջավայրի ամրապնդում</p>					
----------------	--	---	--	--	--	--	--

Խնդիր 6	<p>Քայլ 1. Շարունակել համագործակցել «Թումո» և «Վորլդ Վիժն Արմենիա» կազմակերպությունների հետ:</p> <p>Քայլ 2. Շարունակել մասնակցել ամենամյա շախմատի և առարկայական օլիմպիադաների ներդրոցական, տարածքային, մարզային և հանրապետական փուլերին</p> <p>Քայլ 3. Աշակերտների ակտիվ մասնակցություն համադպրոցական մրցույթներին</p> <p>Քայլ 4. Դիմել մոտակա դպրոցի տնօրինությանը՝ միջդպրոցական մրցույթներ կազմակերպելու համար:</p>	<p>Աշակերտների ուսման առաջադիմության բարձրացում, ուսման որակի բարելավում</p>					
---------	---	--	--	--	--	--	--

Խնդիր 7	<p>Քայլ 1. Հորդորել ուսուցիչներին ընտրել դասավանդման նոր մեթոդներ՝ SՏՏ-ի կիրառումով:</p> <p>Մոտիվացնել աշակերտներին՝ պասիվ լսողից դառնալ ակտիվ կատարող:</p> <p>Քայլ2. Համագործակցություն մենթոր դպրոցի հետ:</p> <p>Քայլ 3. Այցելություն կից գորամաս:</p>	<p>Ուսուցման նոր մեթոդների կիրառումով՝ կրթության որակի բարելավում</p>				
Խնդիր 8	<p>Քայլ1. Համակարգչային տեխնիկայի սարքավորումների համալրում:</p> <p>Քայլ 2. Ուսուցիչների մասնակցությունը մեդիագրագիտությանն ուղղված դասընթացներին:</p> <p>Քայլ 3.Համակարգչով կամ պրոյեկտորով դասապրոցեսը դարձնել գործելաոճ:</p>	<p>SՏՏ-ի կիրառումը՝ որպես ժամանակակից ուսումնառության միջոց</p>				
Խնդիր 9	<p>Քայլ1. Սպորտդահլիճի վերանորոգում և մարզագույքի ձեռքբերում:</p> <p>Քայլ2. Ֆիզկուլտուրայի մասնագետի ներգրավում (հնարավորության դեպքում):</p> <p>Քայլ3. Մարզահրապարակի վերանորոգում</p>	<p>Առողջ և անվտանգ կենսակերպի ապահովում</p>				

Խնդիր 10	<p>Քայլ 1. Բարելավել կառավարման Խորհրդի հետ համագործակցության թյունը:</p> <p>Քայլ 2. Խորհրդի կողմից սահմանած ներքին կարգապահական կանոնների պահպանումը դարձնել անխախտ գործելաոճ</p>	Թափանցիկ գործելաոճով կարգապահ դպրոց					
----------	--	-------------------------------------	--	--	--	--	--